տարիներն ընդունել հանգուցեալ Բաւականեանի և ուրիշ երկու ընկերների հետ: Նոյն ամսի 26-ին կուսակրօն քահանայ է ձեռնադրւել, իսկ 29-ին վեղար ստացել Անդրէաս Արքեպիսկոպոսի ձեռքով: 1873 թ. իւր հաւատարիմ և արդիւնաւոր ծառայութեան համար արժանացել է ծաղկեայ փիլոնի: Փոխանորդական պաշտօն է վարել Ախալցխայում 1882 թ., դեկտ. 29-ից հոգևոր հովուի պաշտօն է կատարել երկու մայրաքաղաքների եկեղեցիների համար և կրօնուսոյց եղել հայոց դպրոցում, մի և նոյն ժամանակ ի հարկէ բեմից յաճախ քարոզելով ժողովրդին: 1887 թ. 10-ին նշանակուած է մայրաքաղաքների եկեղեցիների կառավարութեան անդամ շատ կարճ ժամանակով: 1887 թ. ստանում է Խրիմու Ս. Խաչի վանահայրութեան պաշտօնը, ուր մնում է մինչև 1893 թ., երբ ներկայ Ս. Հայրապետը իւր Աթոռն էր գալիս Երուսաղէմից Ս. Օծումն ընդունելու. Հ. Սանփանեան Ուսումնական յանձնաժողովի նախագահ և յետոյ գաւազանակիր և Դիւանապետ է նշանակուած Ն. Վեհափառութեան: Ս. Հայրապետի շնորհաբաշխութեամբ 1894 թ. սեպտ. 26-ին արժանացաւ եպիսկոպոսական բարձր աստիճանին մի և նոյն ժամանակ իրաւունք ստանալով պանակէ կրելու: 1895 թ. փետր. 13-ին Աստրախանի թեմի ժամանակաւոր կառավարիչ նշանակուեցաւ, բայց տարին չլրացած՝ արձակուեցաւ այդ պաշտօնից և հայրապետական № 334 կոնդակով կրկին Ս. Խաչի վանահայր նշանակուեցաւ: Վերջին ամիսներս Ս. Հայրապետի հրամանով Էջմիածին էր վերադառնում, երբ հիւանդացաւ ճանապարհին և Թիֆլիսում նոյեմբերի 13-ին գիշերը հանգեաւ ի Տէր: Հանգուցեալը 25000 ր. է կտակել այս և այլ հաստատութիւններին, որ պէտք է օգտուին 130 տարուց յետոյ՝ երբ ամբողջ գումարը 4 միլիոնի կհասնի: Ս. Հայրապետի հրամանով յուղարկաւորութեան մասնակցում էին Թիֆլիսի Գերապատիւ առաջնորդից զատ՝ Գանձակի փոխանորդ Տ. Անանիա եպիսկոպոս, Գորուայ Տ. Իսահակ և Ալէքսանդրապօլի Տ. Մատթէոս վարդապետները, Մայր Աթոռի Միաբանութեան կողմից Տ. Տիրայր վարդապետ: Բագուից, Երևանից և Վաղարշապատից պատգամաւորութիւններ էին ուղարկուած կամ նշանակուած, որ բազմաթիւ պսակներ էին դրել դագաղի վրայ:

Մի քանի խօսքով հանգուցեալի կեանքի ընթացքը նկարագրելով՝ դժուարանում ենք աւելի մանրամասնութիւնների մէջ մտնել. Խորէն եպիսկոպոս Սանփանեան տաղանդաւոր և համակրելի յատկութիւնների հետ ունէր և խոշոր թերութիւններ, այդ պատճառով ժամանակակից մարդու համար շատ դժուար է արդար դատաւոր հանդիսանալ նորա վերայ: Բայց ընդհանուր առմամբ յանձին Սանփանեանի մեր եկեղեցին կորցնում է իւր անկեղծ և արդար սպասաւորներից մէկին: Նա մեծ ձիրք ունէր յատկապէս քարոզչութեան մէջ, յաճախ կարողանում էր արտասուք շարժել ունկնդիրների աչքում, ինչպէս լսել ենք ականատեսներից: Հայ և Ռուս թերթերը նորա մահուան առթիւ համակրական յօդուածներ գրեցին: Նոյեմ. 19-ին պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեցաւ Մայր Տաճարում, իսկ նոյն երեկոյեան ուսուցչական խմբի ներկայութեամբ ճեմարանում, ուր $187^{8}/_{9}$ թ. ուսուցչութիւն է արել *:

Լուսաւորեսցէ Տէր զհոգի հանգուցելոյն: Ամէն:

Ա Զ Դ.

Անցեալ տարի Մ. Աթոռոյ Ճեմարանի բացման ԽԵ. տարեդարձի առթիւ կարդացուած տեղեկագրի մէջ յիշուեցաւ, որ Վ. Ագուլեցի առաջնակարգ վաճառական պ. Ա. Հախնազարեան 500 ր. էր նուիրել օրինակելի քարոզների մի ժողովածու հրատարակելու նպատակով: Այդ նպատակին իրագործելու համար պ. Հախնազարեան նախօրօք մեզ էր դիմել և մենք յանձն էինք առել կազմել այդպիսի մի

---

* Տարաբաղդաբար այսպիսի խնդիրներում իսկ մեր հայ թերթերից ոմանք անաչառութիւն պահպանել չկարողացան, հռչակելով, թէ հանգուցեալը հալածանք է կրել եկեղեցու վարչութեան կողմից: Իրողութիւնն այն է, որ նա վերջին տարիները վանահայրութիւնից դուրս ուրիշ պաշտօն չկատարեց, բայց բոլորովին ուրիշ պատճառներով, քան ակնարկել էր հայ թերթերից մէկը, որին հետևել են և ուրիշները:

ժողովածու, որի մէջ նորա ցանկութեամբ պէտք է մտնէին տարուայ բոլոր կիւրակէների և գլխաւոր տօների համապատասխան քարոզներ և որ Հայոց եկեղեցիներին բաժանուելով իբրև օրինակ պէտք է ծառայէր քահանաների համար և նիւթ պէտք է տար յարմարաւոր քարոզներով մխիթարելու ժողովրդին: Սակայն որովհետև մեր բազմաթիւ զբաղմունքներն արգելք եղան մեզ մինչև այժմ այդ նպատակն իրագործելու, իսկ նուիրատուի բաղձանքն է, բաց կարելոյն շուտ իրագործուած տեսնել, դիմում ենք նորա ցանկութեան համեմատ բոլոր այն քարոզիչ հայերին, որոնք ունին պատրաստ կամ կարող են պատրաստել շուտով վերոյիշեալ նպատակին յարմար օրինակելի քարոզներ՝ խնդրելով ուղարկել այն յանուն Ճեմարանի վարչութեան: Պ. Նուիրատուն խոստանում է արտաքոյ 500 ր. նուէրի առանձին վարձատրութիւն տալ քարոզների հեղինակներին, որչափ կարօղէ Ճեմարանի Ուսումն. Խորհուրդը, որ կքննէ ուղարկուած քարոզները և ընտրելիներն ի լոյս կընծայուէ փոքր տետրակներով՝ բաց նիւթի կամ բաց հեղինակի, մինչև որ կարելի կլինի նոցանից մի ընդարձակ ժողովածու կազմել:

Կարապետ Վարդապետ.

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

— Ս. Հայրապետը յատուկ գրով մը յանձնարարած էր Ս. Պատրիարքին՝ արտօնել Մամիկոնեան Տ. Աբրահամ եպս.ը եկեղեցական պաշտօն կատարելու: Ս. Պատրիարքը ի պատասխանի Ն. Ս. Օծութեան այդ յանձնարարագրին, գրութեամբ մը մանրամասն տեղեկութիւններ հաղորդած է Կրօն. Ժողովոյ այս մասին բրած կարգադրութեան և Տ. Աբրահամ եպս.ի վիճակին վրայ:

— Արաբկիրի Առաջնորդ Մուշեղ Ծ. Վ.ի համար պաշտօնակից մը տակէ առաջ լուր մը հրատարակած էր, իբր թէ Մուշեղ Վ. Ակն գտնուած միջոցին ի բացուցած է տեղւոյն առաջնորդարանին պատկանող շատ հին մագաղաթեայ թանկագին Մաշտոց մը, և Մուշեղ Վ. բողոքած էր այդ զրպարտութեան և զայն յերիւրող անձերուն դէմ: Պատրիարքարանէ յանձնարարուած էր տեղւոյն գաւառ. վարչութեան, այս մասին քննութիւն մը կատարել և տեղեկագրել Պատրիարքարանս: Ակնայ կրօնական և քաղաքական Ժողովները, Ազգ. Կեդր. վարչութեան այս յանձնարարութեան վրայ, մանրամասն քննութիւն մը կատարելով առաջնորդարանի մատենադարանին մէջ, և աչքէ անցնելով մատենադարանի հին և նոր բոլոր գրքերու ցանկերը, երևան հանած են թէ առաջնորդարանի մատենադարանին բոլոր գրքերը ամբողջ են և թէ առաջնորդարանին մէջ գոյութիւն ունեցած չէ այդ տեսակ մագաղաթեայ հին, պատկերազարդ Մաշտոց մը:

— Գրեցինք տակէ առաջ թէ Մարզուանի վանքը գտնուող Իբրանոսեան Գէորգ վարդապետ Դերջանի հովիւ կարգուած է: Յիշեալ վարդապետը այս օրերս նամակ մը գրելով Պատրիարքարան, Դերջան երթալու համար անհրաժեշտ ճամբու ծախքը կը խնդրէ, միևնոյն ատեն պատրաստակամութիւն յայտնելով Վան ալ երթալու, եթէ հարկ դատուի:

— Կարնոյ Տեղապահ Զաւէն Ծ. Վարդապետ Իւչ Քիլիսէի վանքին մէջ որբանոց մը հաստատելու համար Պայազիտ երթալով, տեղւոյն Տեղապահ Մամբրէ վարդապետի հետ կրթական հաստատութեանց կտակեալ գումարներու մասին քննութիւն մը կատարեր և հարիւր ոսկիի չափ կտակուած գումար մը երևան հաներ է:

— Ծանօթ բարերար ազգային մը այս անգամ Ալպօյաճեան Պօղոս էֆէնտիի ձեռօք տասը օսմանեան լիրա նուիրած է Գում Գաբուի չորս թաղերու Աղքատախնամին, որպէս զի այդ չորս թաղերու կարօտեալներուն ածուխ բաշխուի ձմեռ օրերուն մէջ:

— Եզնկայ վանքը գտնուող Մխիթարեան Տ. Խորէն սրբազան հակառակ իր ծերունի և հիւանդոտ վիճակին, սկսեր է նոյն վանքին մէջ գտնուող Ազգ. որբանոցի զարգացած ուսանողներուն շաբաթը չորս անգամ կրօնային-բարոյագիտութեան դասեր աւանդել:

— Առևտրական և արհեստական գործերով Գահիրէ հաստատուած Վանեցի ազգայիններ որբախնամ մարմին մը կազմած էին տակէ առաջ: Այս անգամ, յիշեալ մարմինը իր կողմէ հաւաքուած 50 անգլ. ոսկին Վան ղրկելով, յանձնարարեր է 6 որբ ալ պահել Վարագայ որբանոցին մէջ, իրենց ծախքով պահուած 8 որբերէն զատ:

— Պաթընի հովիւ Մաշթոց վարդապետի նախագահութեամբ, ամերիկաբնակ Հայեր բարեգործական մարմին մը կազմեր են, որ նպատակ ունի Վանայ վարժարաններուն մէջ երկրագործական դասընթացներ հաստատել տալ, աշա-